

ԿԱՐՄԻՔ

Արուսյակ Գևորգի Գևորգյանի՝ «Իրավապահ մարմիններում մարդկային ռեսուրսների կոնստրուկտիվ կառավարման յուրահատկությունը (ՀՀ ոստիկանության օրինակով)» վերստառությամբ ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Արուսյակ Գևորգի Գևորգյանի՝ «Իրավապահ մարմիններում մարդկային ռեսուրսների կոնստրուկտիվ կառավարման յուրահատկությունը (ՀՀ ոստիկանության օրինակով)» թեմայով ատենախոսությունը հիմնահարցի կոմպլեքս հետազոտություն է: Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակին հաջողվել է լուծել իր առջև դրված գիտական խնդիրներն ու նպատակները և խորն ու հանգամանալի հետազոտման ենթարկել իրավապահ մարմիններում ղեկավարի գործունեության արդյունավետությունն ապահովող անձնային և սոցիալ-հոգեբանական գործոնները, շատ դեպքերում կատարել գիտականորեն հիմնավորված առաջարկություններ:

Գրախոսվող ատենախոսության կառուցվածքը համարժեք է հետազոտության առարկայի առանձնահատկություններին և հետազոտական խնդիրների շրջանակին: Կազմված է ներածությունից, երեք՝ երկու տեսական և մեկ փորձարարական գլուխներից, եզրակացություններից, համապատասխան մասնագիտական գրականության 193 անուն գիտական աղբյուրների ցանկից և հավելվածներից: Ընտրված մեթոդիկաների փաթեթը համապատասխանում է հետազոտության նպատակին և դրված խնդիրներին:

Ներածական մասում հանգամանորեն հիմնավորված է հետազոտության արդիականությունը, ներկայացված են ուսումնասիրության օբյեկտը, առարկան, վարկածը, նպատակը, խնդիրները, մեթոդաբանական հիմքերը, ուսումնասիրության

մեթոդները, գիտական նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին՝ «Մարդկային ռեսուրսների կառավարման հիմնախնդրի վերլուծություն» գլխում ներկայացված է մարդկային ռեսուրսների կառավարման փիլիսոփայական, տնտեսագիտական, սոցիոլոգիական մոտեցումների դերը կազմակերպության մարդկային ռեսուրսների կառավարչական գործունեության իրականացման ընթացքում: Դիտարկվում են անձնակազմի կառավարման գործընթացի փուլերը, սկզբունքները, գործառույթները և այլն: Քննարկվում են կոնստրուկտիվ և դեստրուկտիվ կառավարում հասկացությունները: Առաջին գլխում ատենախոսի կողմից վեր են հանվել անձնակազմի կառավարման խնդրահարույց հարցերը: Կատարված տեսական վերլուծությունից պարզվել է, որ ղեկավարի գործունեության արդյունքի վրա ազդում է կառավարման գործընթաց կառուցելու նրա ունակությունը՝ հաշվի առնելով աշխատանքային կոլեկտիվի հոգեբանական և սոցիալական զարգացման օրենքները և օրինաչափությունները, մարդկանց հանդեպ անհատական մոտեցումը՝ հիմնված ժամանակակից կառավարման հոգեբանության նվաճումների վրա:

Ատենախոսության երկրորդ՝ «Մարդկային ռեսուրսների կառավարման յուրահատկությունները ուստիկանության համակարգում» գլխում հեղինակի կողմից ներկայացված են իրավապահ գործունեության առանձնահատկությունները, ուստիկանության աշխատակիցների հոգեբանական պատրաստվածությունը, հոգեբանական ռեսուրսների հաշվառման և գնահատման խնդիրները, հոգեբանական անվտանգության առաջնահերթությունը լարված իրավիճակներում: Դիտարկվում են նաև աշխատակցի անձի նկատմամբ մասնագիտական-հոգեբանական պահանջները, իրավապահ մարմիններում սոցիալ-մասնագիտական տարբեր գործառույթներ իրականացնող աշխատակիցների հոգեբանական առանձնահատկությունները և այլն: Հեղինակի կողմից վեր են հանվել ուստիկանության գերատեսչության ղեկավար կազմի և ստորաբաժանումների ղեկավարների կառավարչական աշխատանքի

յուրահատկությունները, որը ենթադրում է թե՛ մասնագիտական, թե՛ հոգեբանական գիտելիքների և հմտությունների տիրապետում: Անդրադարձ է կատարվել ղեկավարների կառավարման ոճերին, հոգեբանական կոմպետենտությանը՝ որպես կոնստրուկտիվ կառավարման հիմք, առանձնացվել են իրավապահ մարմինների ղեկավարի հոգեբանական կոմպետենտության բաղադրիչները:

Ատենախոսության երրորդ՝ «Իրավապահ մարմիններում մարդկային ռեսուրսների կոնստրուկտիվ կառավարման յուրահատկությունների հետազոտության կազմակերպումն ու արդյունքների վերլուծությունը» գլխում ներկայացված են հետազոտության իրականացման տրամաբանությունը, հետազոտության իրականացման ռազմավարությունը, ինչպես նաև հետազոտական տարբեր փուլերում ներգրավված համակազմի քանակական ցուցանիշները, մանրագնին կերպով ներկայացված են փորձարարական հետազոտության համար ընտրված և կիրառված որակական և քանակական վերլուծության, փորձագիտական հարցման, հարցաթերթիկային հարցման, մաթեմատիկական վիճակագրության մեթոդները, ինչպես նաև թեստավորման շրջանակում օգտագործված մեթոդիկաների էությունն ու անցկացման ընթացակարգը: Երրորդ գլխում հեղինակի կողմից ներկայացված են հետազոտության իրար հաջորդող փուլերում ստացված տվյալներն ու դրանց մեկնաբանությունը, ներկայացված է կատարված վերլուծությունը, որտեղ առանձնացվել են արդյունավետ աշխատանքին խոչընդոտող գործոնները, անդրադարձ է կատարվել տարբեր ստորաբաժանումներում տիրող հոգեբանական մթնոլորտին: Արդյունքում ՀՀ ոստիկանության տարբեր կառույցներում կան ինչպես դրական՝ համագործակցությամբ, փոխադարձ օգնությամբ, հետաքրքրվածությամբ, համաձայնությամբ, ջերմությամբ և արդյունավետությամբ, այնպես էլ բացասական՝ անտարբերությամբ, անբավարարվածությամբ, սառնությամբ, անհաջողությամբ, անհամաձայնությամբ և ձանձրոյթով բնորոշված հոգեբանական մթնոլորտ ունեցող ստորաբաժանումներ: Հեղինակի կողմից անդրադարձ է կատարվել աշխատողի՝ իր աշխատանքից ընդհանուր կամ ինտեգրալ բավարարվածությունը, վեր է հանվել

աշխատակիցների սոցիալ-հոգեբանական դիրքորոշումների արտահայտվածությունը բարենպաստ և անբարենպաստ հոգեբանական մթնոլորտ ունեցող ստորաբաժանումներում:

Հեղինակի կողմից ՀՀ ոստիկանության համակարգի տարբեր ստորաբաժանումների ղեկավարների հետազոտության արդյունքները ներկայացված են հետևյալ տրամաբանությամբ. նախ ներկայացված են ֆոկուս խմբի արդյունքները՝ ուղղված մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետության սոցիալ-հոգեբանական խնդիրների բացահայտմանը, այնուհետև՝ ղեկավարների կառավարման ոճի և որոշումների կայացման յուրահատկությունները, ինչպես նաև դրանց բնորոշ անձնային հատկությունները՝ ամփոփելով ղեկավարի կոնստրուկտիվ կառավարման բոլոր բաղադրիչների միջև առկա նշանակալի համահարաբերակցային կապերի ներկայացմամբ: Բացահայտվել են ոստիկանական համակարգում մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարմանն առնչվող սոցիալ-հոգեբանական հետևյալ հիմնական յուրահատկությունները:

Ներկայացված ուսումնասիրությունը մեթոդաբանական լիարժեք հիմքերի վրա, համարժեք մեթոդներով մանրակրկիտ կատարված, ամբողջական գիտական աշխատանք է: Այն հիրավի, շատ արդիական է: Տվյալների ամփոփման արդյունքում հեղինակի կողմից առաջարկվել է իրավապահ մարմիններում ղեկավարի կոնստրուկտիվ կառավարման մոդել, ինչը իրավապահ մարմինների կառավարման համակարգում իրենից ներկայացնում է հոգեբանական կողմից որոշակի ներդրում: Ստացված տվյալները կիրառական մեծ նշանակություն ունեն, դրանք կարող են կիրառվել ՀՀ իրավապահ մարմիններում կառավարման համակարգում առկա հոգեբանական մոտեցումները վերանայելու, հստակեցնելու, նոր մոտեցումներ մշակելու գործընթացում:

Այս բոլորով հանդերձ աշխատանքն ընթերցելիս առաջացան որոշակի հարցեր, որոնք առանձնահատուկ մեկնաբանման և լուսաբանման կարիք ունեն:

1. 3.1՝ «Հետազոտության կազմակերպումը» ենթագլխի երկրորդ պարբերության մեջ նշվում է «Ի սկզբանե պլանավորվել էր ուսումնասիրել նաև իրավապահ համակարգի ստորաբաժանումների գործունեության արդյունքները, որը, սակայն, դուրս մնաց հետազոտության բովանդակությունից այն պատճառով, որ իրավապահ մարմիններում հաշվետվությունները և այլ փաստաթղթեր կոնֆիդենցիալ են և հասու չեն հանրային հրապարակման...»: Կարծում ենք, որ կարիք չկար գրել այն, ինչ չի իրականացվել, այլ շեշտը ի սկզբանե դնել և ներկայացնել այն, ինչ իրականացվել է՝ սխալ դիրքորոշում չստեղծելու նպատակով: Անհարժեշտության դեպքում չիրականացվածի վերաբերյալ տեղեկատվությունը և դրա հիմնավորումը կարելի էր ներկայացնել տվյալ ենթագլխի վերջում:


2. 3.1՝ Հետազոտության կազմակերպումը" ենթագլխում ներկայացվում են նախ հետազոտության մեթոդները /էջ 83/, ապա նշվում է՝ „Համառոտակի ներկայացնենք յուրաքանչյուր մեթոդի բովանդակությունը...“ Սակայն այս նախադասությանը հաջորդում է կոնկրետ մեթոդիկաների՝ թեստերի և հարցարանների նկարագրությունը: Իսկ մեթոդները նկարագրվում են ավելի ուշ: Կարծում ենք, ճիշտ կլիներ նկարագրել նախ մեթոդները, ապա՝ կոնկրետ մեթոդիկաները՝ տրամաբանությունը չխախտելու համար:

3. 3.2.2 ենթագլխի Գծապատկեր 1-ի ներքևում նշված է „Ոստիկանության կրթահամալիրի ստորաբաժանումներում առկա հոգեբանական մթնոլորտը“: Կարծում ենք, ճիշտ կլիներ գրել „Ոստիկանության կրթահամալիրի ստորաբաժանումներում առկա հոգեբանական մթնոլորտի գնահատման արդյունքները“, որովհետև հարցարանը ենթադրում է գնահատում:

4. Ատենախոսը որպես առաջարկ ներկայացրել է կոնստրուկտիվ կառավարման մոդելը, սակայն առանձնացված քայլերով առաջարկներ ներկայացված չեն, ցանկալի կլիներ ներկայացվելին առանձին ենթավերնագրով առաջարկություններ:

5. Կան որոշակի տեխնիկական բացթողումներ, որոնք ընդհանրության մեջ չեն նսեմացնում կատարված աշխատանք բարեխղճությունը և գիտականությունը:

Հարկ է միաժամանակ փաստել, որ ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը: Վերը նշվածի պայմաններում գտնում եմ, որ Արուսյակ Գևորգի Գևորգյանի թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն ամբողջական, համալիր և ավարտուն հետազոտություն, որում հեղինակին հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրներն ու կատարված հետազոտության արդյունքում ներկայացնել ինքնուրույն առաջարկություններ: Այդ մասին են վկայում պաշտպանության ներկայացվող դրուժներում և աշխատանքի եզրակացությունում շարադրված հետևությունները: Արուսյակ Գևորգի Գևորգյանի՝ «Իրավապահ մարմիններում մարդկային ռեսուրսների կոնստրուկտիվ կառավարման յուրահատկությունը (ՀՀ ոստիկանության օրինակով)» թեմայով ատենախոսությունը ավարտուն և գիտական նորույթ պարունակող հետազոտություն է, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից նմանատիպ աշխատանքներին ներկայացվող հիմնական պահանջներին և հեղինակը՝ Արուսյակ Գևորգի Գևորգյանը արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝  Ս.Ս.Սեդրակյան

հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ս.Ս.Սեդրակյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Որարտու համալսարանի գիտական գծով պրոռեկտոր
Բժշկական գիտությունների դոկտոր՝

Ժ.Ռ.Բարսեղյան





«10» հոկտեմբերի 2022թ.